«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ «ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

Առարկան՝ «Հայոց լեզու և գրականություն»

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Գասպարյան

Ուսումնական հաստատություն՝ Դ. Սարապյանի անվան հ. 100 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

- *Բովանդակություն 2*
- *Ներածություն 3*
- *Ուսումնասիրություն. Ազգային արժեքների ձևավորումը աշակերտների շրջանում. «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը դպրոցների տարբեր դասարաններում 6*
- *«Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարներն ու պատմական հիմքը 14*
- *Եզրակացություն 19*
- *Օգտագործված գրականության ցանկ 21*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը՝ մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության

բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Նման ստեղծագործությունների շարքին է պատկանում հայ ժողովրդի

ազգային էպոսը՝ դյուցազնավեպը՝ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ»:

«Սասունցի Դավիթ» հայ հերոսական էպոսը, որի ուսուցումը և յուրացումը եղել ու մնում է հայ դպրոցի գրականության ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը թարգմանված է աշխարհի շատ լեզուներով և ունի միջազգային տարածում: Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին, ունենալ անկախ հայրենիք և ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

Աշխատանքի բուն նպատակն է, որ

- ✓ ուսուցիչը երեխայի մեջ արթնացնի հայրենասիրությունը, հայրենիքի պաշտպանության գործին ծառայելու պատրաստակամությունը,
- ✓ ուսուցչի ներդրումով երեխան ունենա ազգային ինքնագիտակցություն և կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- ✓ որպեսզի երեխան գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում իր ուրույն դերը, գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.

Ամեն ժողովրդի էպոս ամենակարևորն է ստեղծող ժողովրդի բանահյուսության գանձարանում: Այդպիսին է նաև հայ ժողովրդական հերոսական էպոս «Սասունցի Դավիթը», որին ծանոթանում են տարբեր դասարաններում: Էպոսի ուսուցումը սկսվում է ցածր դասարաններից, և դա տրամաբանական է: Մեծ մտածող, մանկավարժ և գրող Լևոն Շանթը, որը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ապագա և գործող ուսուցիչներին հղել է բազմաթիվ օգտակար պատգամներ: Ահա թե ինչ է ասում նա «Հաջորդականության ընտրությունը» հոդվածում.

«Ո՛չ մեկ կարողություն, ոչ մեկ ուսում ու գիտություն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչ-քիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողություն, ո՛չ մեկ գիտություն վերջ ու գագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի կատարելագործել. ինչ որ սովորաբար ավարտել, գագաթնակետ կամ կատարելություն կնկատենք՝ հարաբերական արտահայտություններ են միայն»:

Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար՝ այն ուղեցույց է:

Այս ճշմարտությունը գիտակցել է հենց էպոսի առաջին գրառողը՝ Գարեգին Սրվանձտյանցը, որի կատարածը հիմք դարձավ հայ էպոսագիտության զարգացման համար:

Զարմանալի չէ, որ Գ. Սրվանձտյանցի գրառումից շատ չանցած հայ գրականության մեջ այդ գրառման հիման վրա հանդես եկան էպոսի երկու գրական մշակումներ: Առաջինն այն իրականացրեց Սեդրակ Մանդինյանը (1844-1915), որը մանկավարժ էր, դերասան, գրական ու թատերական գործիչ: Նա երկար տարիներ հայ գրականություն է դասավանդել դպրոցներում և միանգամից կարևորել է էպոսի՝ ազգային ոգին արթուն պահելու հատկանիշը ու իրականացրել նրա մշակումը՝ «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրով:

Երկրորդը՝ Գրիգոր Բալասանյանն էր, որ 1889 թվականին Մոսկվայում տպագրեց «Առյուծաձև Միհր» երկը՝ այն անվանելով ազգային պոեմա:

Դրանից հետո «Սասունցի Դավիթ» էպոսը բազմիցս մշակվել է: Մշակողներից մեկն էլ եղել է Վանում ծնված, հետագայում Խորհրդային Հայաստանում բնակված և դարձյալ ուսուցիչ Մկրտիչ Խերանյանը (1889-1970), որը 1958թ. հրատարակել է էպոսի մի նոր մշակում՝ «Սասնա տուն» խորագրով:

«Սասունցի Դավիթ» էպոսը դպրոցում դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտենա, որ հայ բանահյուսության այդ անգին գանձը մեզ է հասել շուրջ 150 տարբերակով և ամենատարբեր վերնագրերով: Այդ վերնագրերից են՝ «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ», «Սասնա ծռեր», «Սասնա տուն», «Ջոջանց տուն» և այլն:

Չորրորդ դասարանում արդեն «Սասունցի Դավիթ» էպոսը դասավանդվում է ըստ Մկրտիչ Խերանյանի մշակման, որը բավականին մոտ է «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրին:

Ուսուցանվող երկու հատվածներն են՝

1. Դավիթը նախ արթնացնում է Մսրա Մելիքի զորքին, ապա սկսում է սրահարել իր հայրենիքը զավթելու եկած արաբ զինվորներին: Արաբ ծերունին Դավթին խորհուրդ է տալիս սուրն ուղղել պատերազմը սանձազերծած Մելիքի դեմ:

2. Դավիթը հաղթում է Մելիքին ու ազատ արձակում Մսրա զորքին՝ սաստելով, որ այլևս երբեք ոտք չդնեն Սասնա հողին՝ այն նվաճելու նպատակով: Խերանյանի մշակման հետևյալ երկու հատվածները գրեթե նույնությամբ կան և՛ համահավաք բնագրում, և՛ Հովհաննես Թումանյանի մշակման մեջ: Այդ հատվածներն են՝

Մկրտիչ Խերանյան

Հեյ-հե՛յ լսե՛ք, վե՛ր կացեք, վե՛ր,

Մսրա զորքեր.

Ի՞նչ եք քնել խորունկ էդպես՝

Մեռելի պես:

Ելե՛ք, իսկույն զե՛նք կապեցեք,

Ձի թամբեցե՛ք, ելե՛ք հեծե՛ք,

Հետո չասեք.

Թե Դավիթը սուրն անխնա

Քաշեց քնած զորքի վրա:

«Սասունցի Դավիթ» (համահավաք բնագիր)

Գնաց, էլավ Լեռա սարի գլուխ, կանչեց.-«Էհե՛յ,

Ով քընած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիեր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք.

Չասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց»:

«Սասունցի Դավիթ» (Հովհաննես Թումանյան)

-Ով քնած եք՝ արթուն կացե՛ք,

Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,

Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք

Զենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,

Ձի եք թամբել՝ ելե՛ք, հեծե՛ք.

Հետո չասեք՝ թե մենք քընած

Դավիթ գող-գող եկավ, գընաց...

Երկրորդ հատվածը կապվում է էպոսի այն դրվագի հետ, երբ Մելիքը խաբում է Դավթին և հյուրասիրության պատրվակով նրան գցում հորը:

Մկրտիչ Խերանյանի մոտ այդ հետևյալ չափածո տեսքով է.

-Դավի՛թ,-ասաց,-արի՛, նստենք,
Դեռ հա՛ց ուտենք իմ վրանում,
Հետո կելնենք, կռիվ կանենք,
Եթե կռվել ես կամենում:
-Չե՛մ նստի ես քո սեղանին
Քեզ հետ, Մելի՛ք, հաց չեմ կիսի,
Չես կարող ինձ խաբել կրկին
Այդ խոսքերով քո աղվեսի:

Արդեն չորրորդ դասարանի աշակերտին մենք՝ ուսուցիչներս, բացատրում ենք, թե որքան տարբեր են Մսրա Մելիքն ու Սասունցի Դավիթն իրենց մարդկային նկարագրով: Առաջին հատվածից երևում է Դավթի ազնվությունը, մեծահոգությունը, ասպետական նկարագիրը: Նա երբեք չի հարձակվի քնած զորքի վրա, այդօրինակ արարքը հատուկ է ստոր ու վախկոտ մարդկանց: Մինչդեռ Մսրա Մելիքը հատուկ փոս էր պատրաստել՝ Դավթին թակարդը գցելու համար: Հայ ժողովուրդն իր նկարագրով մերժում է նենգությունն ու ստորությունը, որովհետև երբեք չի նվաճել ուրիշներին և ապրել է քրիստոնեական սրբազան մատյանի պատվիրաններով: Այս նույն հատվածների վրա IX և X դասարանների աշակերտների ուշադրությունը հրավիրելիս պետք է անդրադարձ կատարել 1915 թվականի երիտթուրքերի կազմակերպած հայոց ցեղասպանության վրա, որի ժամանակ նահատակվեցին մեկ ու կես միլիոն հայեր: Այստեղ տեղին է հիշել նշանավոր հայագետ և մեծ հայասեր Ֆրեդերիկ Ֆեյդիի զեկուցումը, որը նա կարդացել է 1965 թվականի նոյեմբերի յոթին Բրյուսելի Թագավորական Ակադեմիայում՝ հայոց ցեղասպանության հիսունամյա տարեդարձին նվիրված հիշատակի արարողության ժամանակ: «Ֆեյդին նկատում է, թե ոմանք անվանարկում են հայերին 1915 թվականի ջարդերի առանձին դրվագներում, ասելով, թե նրանք նահատակվեցին ու մահ գտան, որովհետև

չուրացան ո՛չ իրենց հայրենասիրական գաղափարները և ո՛չ էլ կրոնը: Մի՞թե նրանք՝ այդպես ասողները, չեզրակացրին, որ այդ ժողովուրդը գերագույն նվիրվածություն ունի իր ազգային գաղափարներին ու բնավորությանը: Այդ երկու գծերն են, որ մարդուն դարձնում են մարդ, և ժողովրդին՝ ազգ»:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը դասավանդվում է IX դասարանում ևս: Կարելի է ասել, որ սա մեր ազգային էպոսի հետ ծանոթանալու հիմնական յուրացման առաջին ու կարևոր քայլն է, որը ներկայացնում է հայ էպոսագիտության սկզբնավորումը, նրա անցած ճանապարհը, զանազան պատումների գրառումները և դրանց հիման վրա ակադեմիկոս Օրբելու խմբագրությամբ 1939 թվականին համահավաք բնագրի ստեղծումն ու հրապարակումը: Բնականաբար խոսք է ասվում էպոսի պատմական հիմքի, գաղափարական հարստության, կերպարների համակարգի, բառապաշարի շերտերի ու արվեստի մասին: IX դասարանում արդեն հասուն ու զարգացած աշակերտին պետք է մատուցել առավել գիտական մեկնաբանություններ, որոնց միջոցով վերջինս ծանոթանում է միջնադարյան մտածողությանը խիստ հատուկ խորհրդանիշներին, հասկանում հրաշապատում հեքիաթների ու էպոսի աղերսները: Բացատրվում են դևերի, վիշապների խորհրդանիշները:

Հայ ժողովրդական բանահյուսության հյուսվածքներում ակնհայտ է մարդու վաղնջական մտածողության այնպիսի դրսևորումներ, որոնք իրական կյանքի օրինաչափությունները խախտում են, և անհնարինը դարձնում են հնարավոր:

«Սասունցի Դավիթ» էպոսում էլ խախտված են ժամանակի ու տարածության սովորական հասկացությունները: Քուռկիկ Ջալալին նորածին Դավթին ակնթարթային արագությամբ Սասունից հասցնում է Մսր, ուր մանուկ Դավիթը մեծանում է արագությամբ: Կամ՝ իր աղջկա ձեռքով նետահարված Դավիթն այնպիսի ձայն է արձակում, որ բազում մղոններ հեռու լսում է Ձենով Օհանը: Էպոսի մի քանի հերոսներ կենդանի են բոլոր ճյուղերում և գործուն մասնակցություն ունեն չորս գլխավոր հերոսների կյանքում: Դրանցից է Քեռի Թորոսը, որն էպոսի առաջին ճյուղում տասնյոթ-տասնութ տարեկան է, գործում է բոլոր ճյուղերում և վախճանվում է էպոսի վերջում՝ «Վերջերգից» առաջ. Քեռի Թորոս կսկծուց մեռավ, Որ իմացավ

Միերի փակվել:

Ժամանակը խախտված է նաև «Վերջերգում». Փոքր Միերը փակվում է Ագռավաքարում և մնում անմահ: Նա քարից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ հին ու անարդար աշխարհը քանդվի և նրա փոխարեն ստեղծվի նորն ու արդարը, և իրականանա մարդկության բարեկեցիկ ապրելու երազանքը:

Շատ կարևոր է աշակերտին բացատրել, թե «Սասունցի Դավիթ» էպոսում կան բազմաթիվ հնագույն հավատալիքների և հին հասարակարգերի հետքեր: Ինչպես Հովսեփ Օրբելին է նկատել՝ էպոսը պահպանել է մայրիշխանության որոշակի հետքեր: «Սասունցի Դավիթ» էպոսի կրոնական հիմնական ուղղվածությունը կապվում է քրիստոնեության հետ: Սասնա բոլոր դյուցազուններն իրենց թևի վրա ունեն խաչ պատերազմին, որը նրանց թևին իջնում է Աստծու հրամանով ու ամեն անգամ օգնում է Սասնա դյուցազուններին՝ նրանց արդարացի կռվում.

Ասաց.-Հրողբե՛ր,
Տու՛ր ինձ Միերի Խաչ Պատերազմին:
Հրողբերն ասաց.-Ես չե՛մ կարնա տա, Թե արժա՛ն ես՝ կը գա քո թևին,
Թե արժան չես՝ չի գա քո թևին:
Էդտեղ ասրծու հրամանով
Խաչ Պատերազմին իջավ վեր աջ թևին:

IX դասարանի դասագրքում կան նաև «Սասունցի Դավիթ» էպոսի I, III, IV ճյուղերից կարևոր հատվածներ, որոնք եզրափակվում են «Վերջերգով»: Նույն գրքում զետեղված են նաև Հովի. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի XIV, XV, XVI, XXIV հատվածները:

Մանկավարժական և գրականագիտական առումով համահավաք բնագրի և թումանյանական մշակման հատվածների համադրումը խիստ նպատակային է:

Հովհաննես Թումանյանը շատ մեծ տեղ էր հատկացնում գրականությանը՝ ապագա քաղաքացի դաստիարակելու գործում: Նրա «Դպրոց և գրականություն» հոդվածում կարդում ենք.

«Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի

բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ»:

Մեծ գրողը շահագրգիռ էր հայ դպրոցի առաջընթացի խնդիրներում ու երազում էր, որ ամեն հայ աշակերտի հոգում համատեղվեն ազգայինն ու համամարդկայինը: Նա այդ համատեղումը տեսավ «Սասունցի Դավիթ» էպոսում, որը մշակեց հատուկ երեխաների համար: Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» էպոսն առաջին անգամ լույս է տեսել 1903 թվականին: Բանաստեղծը ելնելով իր նպատակադրումից, իր մշակման մեջ բաց է թողել էպոսի ժողովրդական տարբերակից բազմաթիվ մանրամասներ, որոնք ուսուցողական նպատակներով հարմար չէին մատուցել երեխաներին: Այդ մանրամասներից էին Խանդութի ու Դավթի սիրո պատմությունը: Թումանյանի Դավիթը ազգային հերոսի կատարելատիպ է, որի մարդասիրությունն ու ազգասիրությունը լիովին տեղավորվում են քրիստոնեական կրոնի պատվիրանների տիրույթում: Թումանյանի Դավիթը գրեթե բառացի կրկնում է նույն նախազգուշացումը՝ ուղղված թշնամու զորքին, որին ձեռք չի տալիս ու ազատ է արձակում.

Դարձե՛ք եկած ճանապարհով,
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ զենք ու զոռով Վեր եք կացել դուք մեզ վըրա,
Հորում լինեն քառասուն գազ խոր,
Թե ջաղացի քարի տակին,-
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասնա Դավիթ, Թուր-Կեծակին:
Էն ժամանակ ասփված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

Աշակերտներին բացատրվում է, թե որքան ներդաշնակ են հայ հերոսական էպոսի և Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի մարդասիրական ու

հայրենասիրական գաղափարները: Մեծ բանաստեղծը հայ ազգային էպոսի խաղաղասիրական գաղափարախոսությունը հղում էր աշխարհի բոլոր նվաճողներին՝ մարդկությանը տալով եզակի ու կենսական դաս՝ լինել միմյանց հետ բարեկամ և ոչ թե թշնամի:

X դասարանում աշակերտին ուսուցանվում է «Սասնա ծռեր» դյուցազներգությունը: Նույնիսկ փորձ է արվում «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի նոր, ավելի խորացված յուրացման կողքին ծանոթացնել էպոսի երկու այլ պատումների կամ տարբերակների հետ: Նշվում է «Սասնա ծռեր» էպոսի հանդես գալը Արևմտյան Հայաստանում՝ հատկապես Սասունի, Տարոնի, Մոկսի և նրանց հարակից գավառներում: Այս դասարանում աշակերտը դասագրքից յուրացնում է «Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերի գլխավոր դեմքերի՝ Սանասարի ու Բաղդասարի, Մեծ Միհրի, Սասունցի Դավթի և Փոքր Միհրի կերպարների վերլուծական բնութագրերը: Առավել ընդարձակ ձևով են մատուցվում էպոսի գաղափարաբանությունը և ներկայացվում էպոսի լեզվաոճական առանձնահատկությունները:

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ.

«Սասունցի Դավիթ» էպոսի բացառիկ արժեքներից մեկը նրանում արտահայտված գաղափարներն են: Բնականաբար, առաջատար գաղափարը հայրենասիրությունն է, որի մարմնավորողը հայ կինն է՝ Ծովինարը: Բաղդադի խալիֆի հարկահանները գալիս են՝ տանելու հարկը հայոց Գագիկ թագավորից: Ծովինարի գեղեցկությունը տեսնելով («Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ»)՝ որոշում են խալիֆին համոզել հարկի փոխարեն կնության առնել Ծովինարին: Խալիֆը պահանջում է Ծովինարին՝ զգուշացնելով, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հարցի լուծումը գտնում է հայրենասեր Ծովինարը՝ կամովին իրեն զոհելով հանուն երկրի ու ազգականների:

Էպոսի դյուցազունները խալիֆի զավակները չեն, նրանք ջրածին են, ավելին՝ ջուրը Հայաստանինն է: Սա շատ կարևոր դրվագ է: Ընդհանրապես հայրենիքը, հայրենի եզերքը խորհրդանշում են հողը, ջուրը, մարդու հարազատները:

Էպոսում ազգանվեր ու հայրենասիրական գործեր կատարում են թե՛ Սանասարն ու Բաղդասարը, թե՛ Մեծ Մհերը, թե՛ Սասունցի Դավիթը, թե՛ Փոքր Մհերը:

Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է: Առաջին ճյուղում արդեն Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցել իրենց բերդը: Բայց սկզբում կացարաններ են պատրաստում աշխատավոր մարդկանց համար: Այդ քայլի նպատակը մարդասիրական է:

Էպոսում կա աշխատավոր մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք, և Սասնա դյուցազուններն ապրում են այդ գիտակցությամբ. «Նրանց բնավորության ժողովրդական բնույթը սրանով չի ավարտվում: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք

են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ, եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են: Նրանց համեստությունն այնքան մեծ է, որ ինչպես Օրբելին է նկատել Երևանի հրատարակության առաջաբանում. «Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»,- գրում է Ֆ. Ֆեյդին:

Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը:

Դավիթը վերաշինում է Մեծ Միհրի կառուցած Մարութա վանքը: Սակայն ամեն առավոտ վանքը վերակառուցող վարպետներն իրենց կառուցածը գտնում են քանդված: Ոչ ոք չէր կարողանում բացատրել դրա պատճառը, մինչև որ Սասունցի Դավիթը երազ է տեսնում, և երազում Աստծո հրեշտակը նրան հրահանգում է եկեղեցու պատի մեջ դնել Դավթի սուրը: Սա խիստ խորհրդանշական դրվագ է: Դեռևս չորրորդ դարից՝ Շապուհ Երկարակյացի օրերից մինչև քսաներորդ դարասկզբի Մեծ եղեռնը, որը երիտթուրքերի ջանքերով նահատակեց մեկ ու կես միլիոն հայերի, հայ ժողովուրդն իր ազգային ինքնության, կրոնական դավանանքի, անկախության համար մղել է ազատագրական կռիվներ:

Էպոսի տարբեր էջերում տեսնում ենք քրիստոնեական պաշտամունքի դրսևորումներ: Դրանց առաջին ապացույցներից մեկն այն է, որ Ծովինարը ձևական է ամուսնանում Բաղդադի խալիֆի հետ, որը մահմեդական էր (էպոսում՝ կռապաշտ), և քրիստոնեական կրոնը նման ամուսնություն չի թույլատրում: Ծովինարն իր հետ օտար երկիր է տանում նաև քահանա՝ շեշտելով ցմահ քրիստոնյա մնալու ձգտումը: Ավելին, Ծովինարի խնդրանքով քահանան Բաղդադում Սանասարին ու Բաղդասարին հայերեն գրել-կարդալ է սովորեցնում: Քրիստոնեական կրոնի ցայտուն դրսևորում է նաև Սասնա դյուցազունների թևի վրայի եղած խաչը, որը, նայած հանգամանքների, գունափոխվում է: Ինչպես նկատել են էպոսագետները, հայկական էպոսում առկա են հնագույն հավատալիքների հետքեր, հեթանոսական հավատալիքներ: Օրինակ՝ Մեծ Մսրա Մելիքը և Մեծ Միհրը դաշն են կնքում, ըստ

որի, յուրաքանչյուրի մահից հետո մյուսը նրա կնոջն ու երեխաներին պետք է խնամի, և այդ դաշինքը հաստատում են ոչ թե Ավետարանի կամ Ղուրանի վրա երդվելով, այլ իրենց մատների արյունը խառնելով.

Մատներ կտրին, արուն արնի խառնեցին,

Պայման դրին, էղան աղբեր:

Հեթանոսական ժամանակների սովորություններից է նաև այն դրվագը, երբ Իսմիլ խաթունը, բացելով իր կուրծքը, արգելում է Մսրա Մելիքին խեղդել դեռևս տղայական հասակում գտնվող Դավթին:

Քրիստոնեական կրոնի հավատալիքներն ամենից ավելի շեշտված են էպոսի չորրորդ՝ «Փոքր Միհր» ճյուղում, որի ավարտին հերոսը նորից դիմում է Հիսուս Քրիստոսին՝ ակնկալելով զորեղ աստվածային օգնությունը.

Միհր գնաց, հասավ Ոստանա կապան.

Որ հասավ Ոստանա կապան,

Էնտեղեն, - մեկ իշխան կար,

Կապ էթալ, զ Միհր կապեց:

Միհր ձիով ընկավ կապ, ասաց.

«Հիշա իմ հացն ու գինին, տեր կենդանին,

Մարութա բարձր Աստվածածին»:

Ասաց, էզար, կտրեց ըզկապ,

Ազատեց Քուռկիկ Ջալալին:

Քրիստոնեական հավատալիքները երևում են նաև էպոսի «Վերջերգում»՝ կապված քրիստոնեական հավատքի երկու կարևոր տոների՝ Վարդավառի և Համբարձման հետ:

«Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ:

Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է այնպես ներկայացնել էպոսի գլխավոր կերպարներին, որ նրանք ազդեն աշակերտի, նաև ուսանողի սրտի ու

մտքի վրա:

Ուսուցիչը պարտադիր պետք է ուշադրությունը հրավիրի այն փաստի վրա, որ Միերին հետաքրքրելու է ոչ միայն իր երկրի, այլև հանուր մարդկության ճակատագիրը: Նա դառնալու է մարդկության չար ուժերի դեմ կռվող խիզախ մարտիկը, սակայն պարտվելու և փակվելու է Ագռավաքարում՝ մարդկության երջանիկ օրերի հույսով: Ահա թե ինչ է բացատրում Միերը Ագռավաքար մտած հովվին.

Քանի աշխարք չար է,
Հողն էլ ղալբցեր է,
Մեջ աշխարքին ես չեմ մնա:
-Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:
Հովիվ որ դուրս կ'էլնի,
Քար կը գա, կը հասնի իրարու…

Սասունցի Դավթի կերպարին հատուկ հմայք է տալիս նրա սիրո պատմությունը և առ Խանդութ ունեցած վերաբերմունքը: Ամեն ինչ այնքան բնական է, կենդանի, որ կարծես մի գեղեցիկ սիրավեպ լինի հավերժական սիրո մասին:

«Սասունցի Դավիթ»-ը բարձրարվեստ ստեղծագործություն է: Նրա արվեստի տարրերը լայնորեն կապված են բանահյուսությանը հատուկ պոետիկայի հատկանիշների հետ: Հայկական էպոսը լի է չափազանցություններով, և այս առումով այն մոտ է և՛ հնագույն առասպելներին, և՛ հրաշապատում հեքիաթներին:

«Սասունցի Դավիթ» էպոսը գրված է բարբառով, սակայն առանց բառարանի էլ այն հասկանալի է հայ գրական լեզուն իմացող յուրաքանչյուր գրագետ մարդու համար:

Ժողովուրդը սիրով լսել է էպոսում եղած չափազանցությունները. չէ՞ որ չափազանցություններով լի են Հոմերոսի երկու պոեմները, որոնք այսօր էլ հուզում են մարդուն:

«Սասունցի Դավիթ» էպոսը լի է հայ ժողովրդի հավաքական մտածողության մեջ եղած իմաստուն մտքերով, նաև առած – ասացվածքներով: Ահա երկու օրինակ՝

1. «Աշխարհ գութանի մոտ կլիանա»

2. «Ասաց.- Դու քո հոր կտրիճն ես, ես էլ իմ»:

Էպոսի արվեստի ցուցիչներից է նաև կերպարների բազմազանությունն ու նրանց իրական և անմոռաց անհատականություններ լինելը:

Հայկական հերոսական էպոսը ասացողների տարբեր սերունդներ հղկել են, բյուրեղացրել, պատումի ընթացքը դարձրել հստակ, տպավորիչ ու վարակիչ:

Ամեն ազգի էպոս դարերով մշակված և փայփայված մտքի ու զգացմունքների կրողն է:

«Սասունցի Դավիթ» էպոսն ընթերցողին կամ լսողին պատճառում է գեղագիտական հաճույք:

Նշանավոր ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանը նիդեռլանդական էպոսի՝ «Տիլ Ուլենշպիգելի» մասին ասում է. «Այն ազատության դյուցազնական ձայնն է»:

Նույնը պատշաճ է կրկնել «Սասունցի Դավիթ» էպոսի համար, որը ոչ միայն հայ ժողովրդի ազատության դյուցազնական ձայնն է, այլև երբեք չլռող սթափեցման կոչ՝ ուղղված աշխարհի ժողովուրդներին, որոնք իրականում կարող են ապրել խաղաղության ու փոխըմբռնման մթնոլորտում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին: Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:

Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

«Սասունցի Դավիթ» էպոսը եղել և մնում է թե՛ դպրոցական և թե՛ բուհական ծրագրի կարևորագույն թեմա, և նրա ուսուցումը պահանջում է անհրաժեշտ հմտություն: Էպոսի ուսուցումը ներկայացնում է հայ էպոսագիտության անցած ճանապարհը, որը սկսում է 1874 թվականից՝ Գարեգին Սրվանձտյանցի առաջին գրառումից և հասնում մինչև մեր օրերը:

1939 թվականին նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման հազարամյակը, և այդ առիթով հրատարակվել է համահավաք բնագիրը, որի հիմքում ընկած են եղել Կարապետ Մելիք Օհանջանյանի հրատարակած «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումների երեք ստվարածավալ հատորները: Ինչպես Ֆեյդին է հաստատում, էպոսի համահավաք բնագիրն ամբողջովին ստեղծվել է ժողովրդական պատումների հիման վրա, և նրանում հեղինակային, անհատական հետամուտ ոչինչ չկա, ողջը հյուսվել է՝ ըստ «ժողովրդական երակի»:

Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը:

«Սասունցի Դավիթ» էպոսի արվեստի ցուցիչն է նրանում գործող հերոսների խիստ անհատականացված և չմոռացվող կերպարների համակարգը: Հայ ազգային էպոսի յուրացումը պահանջում է բնագրի բարբառային բառերի իմացություն, որոնք այնքան էլ մեծ քանակ չեն կազմում, և դրանց մի մասը դեռ պահպանված է այսօրվա խոսակցական հայերենում:

«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասախոսությունը և դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը:

Լևոն Շանթը, որը նաև հմուտ մանկավարժ էր ու կրթության գործի երկարամյա կազմակերպիչ, կարևորում էր ազգային նշանավոր դեմքերի, պատմական գիտելիքների ուսուցումը հայկական դպրոցներում.

«Մեզի շրջապատող և մեզի հետ դարերու ընթացքին շփման մեջ եղող բազմաթիվ հին ու նոր ժողովուրդներու մասին կհիշվի, բազմատեսակ ընդհանուր պատմական երևույթներու և շարժումներու մասին կխոսվի, ինչպես, օրինակ՝ նախարարական ավատական կապերն են կամ խաչակիրներու արշավը, հույն - սասանական մրցակցությունը, քրիստոնեության ու մահմեդականության ծագումը և ուրիշ»:

Լևոն Շանթի այս ցուցումը լիովին կիրառելի է «Սասունցի Դավիթ» էպոսն ուսուցանելիս:

«Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում և բուհերում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- *Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002*
- *Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:*
- *«Ազգային դյուցազնական աշխարհ» (Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ), Ս. Մանդինյան, Թիֆլիս, 1881*
- *Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1991*
- *Մովսես Խորենացի, Հայոց պատմություն*
- *«Սասնա ծռեր», Ժողովրդական վեպ, Աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, 1977*
- *«Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961*
- *Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. I, Երևան, 1978*
- *Շանթ Լ., Երկերի ժողովածու, հ.V,Երևան, 2012*
- *Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան, 1996*
- *Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան, Մայրենի 4, Երևան, 2010*
- *https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1_%D5%AE%D5%BC%D5%A5%D6%80*
- *http://books.panarm.info/%D5%BD%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1-%D5%AE%D5%BC%D5%A5%D6%80*
- *https://www.armgeo.am/armenian-national-epic/*